



Հավելված թիվ 2
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
18.03.2015թ. թիվ 76-Լ որոշման

Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ

«Փաստաբանի օր» սահմանելու հարցը քննարկելու մասին» օրակարգի հարցով ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու մասին

ք. Երևան, Զաքիյան 2

18.03.2015թ.

Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ 2015 թվականի ապրիլի 25-ին, ժամը 12:00-ից սկսած Երևան քաղաքի Զաքիյան 2 հասցեում (ՀՀ փաստաբանների պալատի և Փաստաբանական դպրոցի վարչական շենքում) հեռակա կարգով հրավիրվելու է ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ «Փաստաբանի օր» սահմանելու հարցը քննարկելու մասին» օրակարգի հարցով:

1. Քվեարկությունը սկսվում է **2015 թվականի ապրիլի 25-ին, ժամը 12:00-ին և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17:00-ին:**

2. «Փաստաբանի օր» սահմանելու վերաբերյալ Ձեր առաջարկները համապատասխան հիմնավորումներով կարող եք ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի նախագահին՝ անհատական կամ խմբային կարգով՝ **2015 թվականի մարտի 19-ից** մինչև **2015 թվականի ապրիլի 2-ը (ներառյալ)**՝ աշխատանքային ժամերին (ժամը 10:00-18:00): Առաջարկները ներկայացվում են առձեռն կամ փոստով: Հայաստանի Հանրապետությունից բացակայող փաստաբանը կարող է իր ստորագրված առաջարկն ուղարկել էլեկտրոնային փոստով՝ info@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին:

3. Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**

4. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**

5. Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկությունները, ինչպես նաև «Փաստաբանի օր» սահմանելու հարցով փաստաբանների առաջարկներն ընդունելու մասին» կարգը կարող եք բեռնել ՀՀ փաստաբանների պալատի www.advocates.am կայքէջից:

ՀՀ փաստաբանների պալատի
աշխատակազմի ղեկավար՝
Մանե Կարապետյան